

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՕՆԷ, ԺօրԺ.—Դոկտոր Ռամօ, «Դոկտրինան կռիւներս: Ֆրանսերէնից թարգմանեց Մ. Խանդավերեան. Մոսկւա, տպարան Մկրտիչ Բարխուդարեանի. 1891 թ., գինն է 80 կոպէկ:

Սրկար տարիներէ ընթացքում մարդկային միտքը կաթոլիկ եկեղեցու ճշոդ ազդեցութեան տակ գրեթէ անշարժ մնալուց չեալ, միջին դարերում, կեանքի նպատակը հանգամանքների ներքոյ, նորից սկսում է արթնանալ, սկսում է իւր իրաւունքները պահանջել, Բեֆորմացիան մի ուժեղ հարածով տատանեց, տեղից շարժեց կաթոլիկ եկեղեցոյ հիւմքը, Դարերով ճշմարտութիւն համարած սկզբունքները սկսեցին հարց դառնալ ու քննութեան ենթարկւել, Մարդիկ չը կամեցան ալլելս աւանդութիւններին կուրօրէն հաւատալ, ալ կամեցան ըմբռնել, հասկանալ ալն ամենը, ինչ որ մինչև ալն ժամանակ երեխայական պարզարտութեամբ ընդունել էին... Մարդկային միտքը սկսեց աճել, զօրեղանալ փոքր առ փոքր և ահա լառաջ եկաւ վերջնական աղոյժ անւանւած անգլիական դրական փրկաւորութիւնը, որը չը բռնականա-

ցաւ բեֆորմացիայի ձեռք բերած լաղթութեամբ, ալ կասկած չալանեց ոչ միալն դէպի եկեղեցոյ ալս ու ալն վարդապետութիւնը, ալ և հարց դարձրեց առհասարակ եկեղեցոյ և կրօնքի մինչ ալն ժամանակ ամենադիւսաւոր ճանաչւած հիմունքների մասին: Նոր փրկաւորութիւնը ֆրանսիական էնցիկլոպեդիստների միջոցով աւելի և աւելի տարածեց ժողովրդի մէջ ու լառաջ բերաւ թէ դիտնական ասպարէզներում և թէ հէնց առօրեալ կեանքի մէջ երկու հակառակ ուղղութիւններ, որոնց մէկի նպատակն էր մարդու բոլոր զաղափարները բղխեցնել մտքից, տրամաբանութիւնից, իսկ միւրը կամենում էր կրօնը ու եկեղեցին զերծ պահել մտքի ազդեցութիւնից, պեղելով թէ կրօնական և եկեղեցական ճշմարտութիւնները չէ կարելի մտքով ըմբռնել, չէ կարելի հետազօտել, քննել, ապաւորեցնել, ալ միալն պէտք է հա-

առաջ... Նրկու ուղղութիւնները մէջ էլ չարտնայեցան ծալրահոգութիւնները Բէալական ուղղութիւնը հասնելով ծալրահոգ մտտերիւղի մին սկսեց պնդել, թէ տիկերքը պատահական պիտի լից պատահմամբ լառաջ եկած աննպատակ կողմութիւն է, թէ մարդը ուրիշ բան չէ, բայց եթէ մի քմիական բաղադրութիւն և ալլն... Սորա հակառակ զոգմատիկական ուղղութիւնը ի դիմաց տեղեւորդիւրի ընդունում էր, թէ ոչ միայն տիկերքը ստեղծւած է նախախնամութեան ձեռքով, այլ որ առհասարակ բնական օրէնքները ու զօրութիւնները ոչինչ նշանակութիւն չունին, քանի որ իւրաքանչիւր երեւոթի մէջ զործողը միակ նախախնամութեան մասն է, որը և ամեն բան լառ ու խելացի է կատարում... Հեռակայէս մարդու միակ նպատակը պիտի լինի հաւատալ և համաձայնել միայն ալն բողբոյի հետ, ինչ որ կատարւում է և ոչ թէ աշխատել բնական երեւոթները բմբռնել իւր մտքով և ծառայեցնել նոցա իւր կամքին:

Հաւանական է, որ լեշիալ երկու շկողաններն էլ մասամբ իրաւունք ունին, երկուսի բերած հիմունքներն էլ իրանց մէջ որոշ ճշմարտութիւններ պարունակում են: Բայց զօւտ ճշմարտութիւնը կը լալտնի միայն ապագայում, երբ բաւականաչափ ֆակտեր հաւաքւած կը լինեն, երբ օժանդակիչ շատ գիտութիւններ, որոնք դեռ կամ նոր են ծնւած, կամ շատ քիչ են ծաղկած, կամ նոյն իսկ դեռ ծնւած էլ չեն, պարզւած ու մշակւած կը լինեն... Եւ դալ ժամա-

նակ երբ ըստմութիւն դիտութիւնները ալնքան նիւթ կունենան, ալնքան հարտադած կը լինեն, որ ալթման ամենամութ խնդիրները իրանք իրանց կ'որոշեն... Ճշմարտութեան լուր կը թափանցէ նոյն իսկ ամենակոյր աչքերի մէջ և մարդիկ կը տեսնեն իսկայէս... Միայն ալդ երջանիկ ժամանակին հասնելու համար հարկաւոր է համբերութեամբ հետազօտել, ուսումնասիրել, ճշմարտութիւնը համետութեամբ որոնել: Ալդ ճշմարտութեանը գտնելուն նըպատուում են վերոլիշիալ երկու հակառակ շկողանները, որովհետեւ նոքա մրցութեան մէջ գտնելով, իւրաքանչիւրը իւր սիրած առարկաները աւելի եռանդով է քննում, աւելի մեծ ուշադրութեամբ է հետազօտում խնդիրները: Ֆրանցիսկո Նոր և տաղանդաւոր գրողներից մէկը՝ Ժորժ Մենէն իւր ներկալ վէպով շոշափում է ալդ խնդիրը, բայց ինչպէս է նա դնում խնդիրը, որքան է պահպանւած նորանում հոգեբանական ճշգրտութիւնը, ալդ կը տեսնենք ներքև:

Տաղանդաւոր վիպասանը վերին աստիճանի պալծառ գոյներով և շատ հրապուրիչ լեզուով նկարագրում է մեղ մի ընտանեկան կեանք, որը ունի բաղաւոր և հանգիստ լինելու շատ նպաստաւոր հանգամանքներ: Սակալն ալդ կեանքը դառնում է ծանր, աննորմալ և վերջերում կատարելապէս թշուառ միայն ալն պատճառով, որ տաղանդաւոր բժիշկ գոկտոր Ռամօն մի հաստատամիտ մատերիալիստ է, իսկ նորա սիրած կինը մի բարեպաշտ, աստուածափախ, սաստիկ կրօնասէր կաթոլիկոն է, որը

հէնց ամուսնանալու օրերից սկսում է աշխատել իւր ամուսնուն «բարեփոխել», աշխինքն դարձնել նորան ջերմեռանդ ատուածապաշտ Դոկտորը ոչ մի առիթ չէ տալիս իւր կնոջը իրանից վշտանալու, սիրում է նորան բոլոր սրտով, ամենալն հարգանքով է նաւում նորա կրօնասիրութեան և ազօթասիրութեան վերալ... Անուամենայնիւ ջերմեռանդ կինը չէ բաւականանում սորանով և ամեն կերպ աշխատում է ամուսնուն փոխել և երբ տեսնում է իւր ջանքերի անպաշտօնութիւնը, սկսում է արհամարել, ատել և վերջ ի վերջո՛ սիրահարւել մի գերմանացի նկարչի վերալ, որը իւր գաղափարներով համապատասխան էր կաթոլիկութեան իղէաներին։ Այդ սիրահարութեան պտուղը լինում է մի աղջիկ, որը խաբւած դոկտորը իրանից չառաջացած է համարում և մինչև նորա չափաքան դառնալը ոչինչ չէ իմանում իւր կնոջ գործածի մասին։ Գերմանացի սիրահարը, որին դոկտորը շատ հարգում էր ու ազատել էր նորան մի մեծ տնտեսական նեղութիւնից իւր սեփական միջոցներից տասնեակ հազարներ զոհելով, թողնում է ամեն ինչ և հեռանում է Պարիզից, Բալց ալդ բոլորը չալտնի է լինում դոկտորի բարեկամ Տալմանին, որը մի բարեսիրտ ու կրօնասէր գիտնական էր և կատարւած սխալը անուղղելի համարելով, ամեն կերպ աշխատում էր դոկտորի և նորա ընտանիքի կեանքը չը խանգարել։

Այդ ժամանակներում տեղի է ունենում Ծրանս-գերմանական պա-

տերազմը և գերմանացիք պաշարում են Պարիզը։ Մի օր պարիզցիների վերցրած գերիներին մէջ գտնւում է և ծանր վիրաւորւած մեր գերմանացի նկարչը, որին Ռամօն կամենում է բժշկել, բալց չէ չաղողում, վերջինս մեռնում է։ Տիկին Ռամօն մալրն էլ փոքր առաջ մեռած է լինում։ Եւ ահա ջերմեռանդ կաթոլիկուհին հաւատացնում է Տալմանին, որ ալդ բոլոր անբաղդութիւնների պատճառը Ռամօն անհաւատութիւնն է, թէ նորա բոլոր շրջապատողները անբաղտանալու են և թէ մեռնելու հերթը ալժմ հասել է իրան, տիկին Ռամօն։ Եւ խեղապէս շատ չ'անցած ևեր հերոսուհին մեռնում է։

Դոկտոր Ռամօն անքան վշտացած է լինում իւր պաշտած կնոջ մահով, որ փակւում է մի սենյակում և չէ կամենում ոչ մի հիւանդին ալ ևս օգնութեան հասնել, քանի որ իւր կինը չ'կալ, Բալց Տալմանին չաղողում է հանել նորան ալդ դրութիւնից։

Անցնում են տարիներ և փոքրիկ աղջիկը մեծանում է և սիրահարւում մի արժանաւոր երիտասարդի հետ, որի մեծ հօր աշխատութեամբն էր դոկտոր Ռամօն իւր բազդի սկիզբը դրել։ Ռամօն և Տալմանը նշանում են սիրահարւածներին և ուրախ են նոցանով։ Բալց մի դէպք ամեն ինչ խանգարում է։ Դոկտորը, իւր աղջկաչ նշանադրութեան միւս օրը, մտնում է իւր հանգուցեալ տիկնոջ սենեակը (ուր մտնում էր նա տարէնը մէկ անգամ) նորան չիչելու համար։ Այստեղ նա գտնում Միւնդելի (գերմանացու) թագցրած մինիատիւր լու-

սանկարը, լիտու էլ նորա գրած մի նամակը, որը և պարզում է զոկտորին իւր խարւած լինելը, Ռամօն կատաղում է և սկսում է ոտի տակ փշրել հանգուցեալ կնոջ երեսնի պատկերը, որ Միւնդելի գործն էր։ Աղմուկի ձախից ներս է մտնում օրիորդը, որի վերալ հալըր գռում է և հրամայում է կորչել իւր աչքիցը։ Խեղճ աղջիկը ուշաթափ գորւում է գետին։ Սորան տանում, պառկեցնում են և զոկտորն էլ գնում է իւր սենեակը և կամենում է թոյն ընդունել, բայց Տալմանը վրա է հասնում և խանդարում է։ Աղջկը անլուսալի պառկած է և իւր հօրն է ուղում տեսնել։ Բայց Ռամօն մերժելով Տալմանի աղերսանքը չէ գնում հիւանդի մօտ «բաւական համարելով 18 տարի խաբւած լինելը»։ Վերջապէս զոկտորը ինքն իրան խղճահարւում է և գնում է հիւանդի մօտ, որին համբուրելով սաստիկ արտասուք է թափում։ Այս բոպէից սկսում է Ռամօի սրտում մի նոր լոյս... Նա սկսում է արհամարել իւր համոզմունքը, անբաւականութիւն զգալ բոլոր գիտութիւններէից և զգալ որ իւր մէջ կալ մի ուժ, որը գործում է հակառակ նորա կամքին։ Ռամօն կամենում է ատել իւր կնոջ աղջիկը, բայց աներևութ ուժը ստիպում է սիրել... Սորանից զոկտորը դալիս է աչն եղբակացութեան, թէ ալդ աներևութ ուժը նախախնամութիւնն է, արարին է, Աստած է... Ուրեմն նա դառնում է հաւատացեալ...

Աղջիկը առողջանում է։ Երկու ամսից լիտու կատարում են պսակադրութիւնը եկեղեցու մէջ։ Ռամօն

ուրախ է, հանգիստ է և մի նոր մարդ է դարձել։ Աղբիւնի (աղջկալ) մէջ նա տեսաւ մի հրեշտակ, — հաւատացնում է հեղինակը — որ ուղարկւած էր իրեն մխիթարելու և ափսոսելու համար ամեն տանջանքներից։ Նրա մէջ մնացած ամեն դառնութիւնները և վշտերը հաւացան բերկրական հիացմունքից և լցւած խորին երախտագիտութեամբ՝ նա ծունկ չոքեց։ Տալմանը լսելով Ռամօի ջածրածախն շննոցը, թեքւեց դէպի նա և որոշեց ալս արտարուղի խօսքերը — Աստած իմ, Աստած իմ... Ալդ անաստածն էր, որ աղօթում էր ալդպէս։

Ուրեմն մեր հերոսը ապաշխարեց, նա մատերիալիստ էր և ալմ դարձաւ հաւատացեալ աստածապաշտ։ Ինչ որ հարկաւոր էր ապացուցել, ապացուցւեց, բայց շատ անտրամաբանօրէն... Մի տաղանդաւոր և հաստատամիտ գիտնական փոխեց միայն աչն պատճառով, որ զգաց թէ ինքը հակառակ իւր կամքին սիրում է աչն արարածին, որին պիտի խկապէս ատէր... Մենք չենք հասկանում թէ ալստեղ ինչ առանձին հրաշք էր տեսնում մեր զոկտորը, որը չը նախելով իւր մատերիալիտական դադափարներին, իւր ամբողջ կեանքում եղած էր ժրաջան, ճշմարտութիւն սիրող և մարդասէր մի մարդ։ Յանկարծակի անելով իւր երկար տարիներ խաբւած լինելու գիւտը, նա ընականաբար դարձուրեց, կատաղեց և ատեց ոչ միայն Միւնդելին (կնոջ սիրահարին) ժառանգին, ալ և ամբողջ աշխարհքը... Բայց երբ կատաղութեան սարսափելի ժա-

մանակամիջոցը անցաւ և Ռամօն սկսեց հանդարտուիլ, նա, որպէս իւրաքանչիւր փիլիսոփա-գիտնական, սկսեց սառն կերպով դատել և եկաւ այն եզրակացութեան որ ինքը իրաւացի չէ վերաբերում դէպի մի անմեղ աղջիկ, որը ինքն ըստ ինքեան բոլորովին մեղաւոր չէր... Եւ ահա մարդասէր գիտնականը նորից սկսեց սիրել անմեղ արարածին, որին նա ծնելու օրից սկսեալ փալփալել էր: Այստեղ ամեն ինչ կատարւեց բոլորովին բնականաբար և Ժորժ Օնէն իզուր է կարծու, թէ ալդ երեւթիք կարող էր ուրաջնել տալ մի գիտնական մատերիալիստին իւր համոզմունքը:

Մի քանի խօսք էլ թարգմանչին: «Երեւում է միւր դարի նիւթականութեան մէջ կալ մի գաղտնի զօրութիւն — ասում է թարգմանիչը իւր երևելի լառաջաբանի մէջ — որ ճիգ է թափում արմատախիլ անել բոլորի սրտիցը ալն լստակ և անդրդւելի հաւատը, որն ունէին մեր նախնիքը և որով միայն՝ մարդ կարող է երջանիկ ապրել մեր ալժմեան (լաւ լսէք) այս մեղսալից և ապականւած ժամանակներում: Կարող էք, պ. թարգմանիչ, ապացուցել մեզ թէ մեր նախնիքը երջանիկ էին, կամ թէ արդեօք ինչի մէջն էք գտնում մեր ժամանակների աւելի միղսալից և ապականւած լինելը... Եւ միթէ դուք կարծում

էք, թէ կեանքը երջանիկ կը դառնալ, չէնց որ մարդիկ կը սկսեն մի կողմն թողնել դործը, աշխատանքը, գիտնական հետազոտութիւնները, կուլտուրական քալերը, և ալլն և կը պարագլեն Զեր կամեցածի պէս, աղօթելով, անդադար եկեղեցի լաճախելով և մանաւանդ Զեր թարգմանութեան նման կեղծ-կրօնասիրական գրքեր կարդալով... Հաւատացում ենք Զեզ, որ չէնց ուղիղ ալդպէս են անում կաթոլիկ և բողոքական հպերը, որտեղ իւրաքանչիւր ընտանիքի մէջ Զեր թարգմանութեան նման տասնեակ գրքեր են գտնուում... Բաց չը նախելով սորան, նոքա, ալիքնքն ալլակրօն հպերը, ոչ աւելի երջանիկ են, ոչ էլ նոյն իսկ աւելի բարձր են կանգնած բարոյապէս, քան լուսաւորչական հպերը... Կեանքը եթէ ոչ երջանիկ, գոնեալ փոքր ի շատէ մարդավալել դարձնելու համար, մեզ անհրաժեշտ է ճշմարիտ մտաւոր զարգացումն, կուլտուրա, անդադար աշխատութիւն դէպի լառաջ և ոչ դէպի «նախնիքը», ինչպէս ալդ դուք կամենում էք: Բաց մանաւանդ մեզ հարկաւոր է լաւ ըմբռնել անցած «երևելի ժամանակի» զարհուրելի մտաւոր խաւարի տւած վնասները և փախչելով նորանից մօտենալ ապագայ լուսաւոր ժամանակին...

Ս. Թ.